- զ) մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից աշխատանքի արտաքին գրախոսության կազմակերպում, որի արդյունքում ոչ ուշ, քան պաշտպանությունից 3 օր առաջ մասնագիտացնող ամբիոնին (միջամբիոնային հանձնախմբին) է ներկայացվում ատենախոսության վերաբերյալ գրախոսականը,
  - դ) մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:
5. Մագիստրոսական թեզի պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգի:
  6. Մագիստրոսական թեզի գնահատումը կատարվում է աղյուսակ 4-ում ներկայացված 20 միավորանոց սանդղակով:
  7. Մագիստրոսական թեզի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

**Աղյուսակ 4.**

Թիվ	Չափանիշ	Առավելագույն միավորը
1	Արդիականությունը/նորույթը	6
2	Ինքնուրույնության աստիճանը	6

<b>3</b>	Ձևակերպման որակը	4
<b>4</b>	Ներկայացման որակը	4
	<b>Ընդամենը</b>	<b>20</b>

8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից մագիստրոսական թեզի գնահատումները կատարվում են սահմանված նմուշի գնահատման ձևաթերթում (տե՛ս *հավելված 4*):

## 12. Կրեդիտների փոխանցումը

1. Այլ բուհերից ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն մագիստրոսի կրթական ծրագրեր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների (կիսամյակ, ուստարի) տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:
2. Այլ կրթական ծրագրից ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն կրթական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե դրանց բովանդակությունները միանման են կամ առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:
3. Այլ բուհում ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի և ընդունող բուհի միջև:
4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը նշանակում է ECTS-ի բուհական համակարգող, որի գործունեության հիմնական ոլորտները և պարտականությունների շրջանակները կանոնակարգվում են առանձին կարգով /անհրաժեշտության դեպքում/:

### 13. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

5. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ամբիոնները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:
6. Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է Կենտրոնը՝ ելնելով տարբեր կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների թվի և ամբիոնների դասախոսական ներուժի համադրումից:
7. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ շրջանում:
8. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ, օգնում դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

### 14. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝
  - ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
  - կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
  - կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:
2. Ուսանողն իրավունք ունի՝
  - – ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար Կենտրոնի կողմից առաջադրվող կամ ընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
  - – միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- – փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
- շարունակելու ուսումնառությունը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում՝ համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին ստանալու ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

### **15. Եզրափակիչ դրույթներ**

Սույն կարգը գործողության մեջ է դրվում 2014 թվականից՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու համար:

## II ԲԱԺԻՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մաս I.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնը մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է ուսուցում՝ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ծրագրով.

## 1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը

Մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ.

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
<b>ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>		
Լրացական դասընթացներ	0	2
Ընդհանուր կրթամաս	3	1
Մասնագիտական պարտադիր կրթամաս	51	15
Կամրնորական դասընթացներ	18	6
<b>ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>		
Գիտական սեմինար	12	4
Գիտահետազոտական աշխատանք	18	4
Գիտահետազոտական պրակտիկա	3	1
Գիտամանկավարժ. պրակտիկա	3	1
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12	1
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>120</b>	<b>35</b>

Կիսամյակ	I	II	III	IV	Ընդամենը
Ուսումնական կառուցամաս, կրեդիտ	24	24	24	0	72
Հետազոտական կառուցամաս, կրեդիտ	6	6	6	30	48
<b>Ընդամենը, կրեդիտ</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>120</b>

Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողությունը, որից 16-ը հատկացվում է տեսական ուսուցմանը և պրակտիկաներին, իսկ 4-ը՝ քննաշրջանին: Ծրագրի առաջին երեք կիսամյակների սկզբում մեկ շաբաթ հատկացվում է մագիստրանտի անհատական ուսումնական ծրագրի ձևավորմանը:

Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ (24 կրեդիտ / 16 շաբաթ = 1,5) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 120 կրեդիտի:

## 2. Ծրագրի բովանդակությունը

### 2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ *լրացական դասընթացներ, ընդհանուր կրթամաս, մասնագիտական պարտադիր կրթամաս և կամընտրական դասընթացներ*: Առաջին երկուսը ծառայում են մագիստրոսի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երրորդ կրթամասը կազմում է մագիստրոսի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի անհատականացված ուսուցման մասն է:

#### Լրացական դասընթացներ

Լրացական դասընթացների բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով մագիստրոսների՝ մասնագիտական և հետազոտական աշխատուժի միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց՝ ծրագրում ընդգրկված է անգլերենը: Մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, գիտական ղեկավարի երաշխավորությամբ ուսանողի անհատական ուսումնական պլանում որպես լրացական դասընթաց կարող է ներառվել նաև օտար այլ լեզու: Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախատեսում է մինչև 3 լրացական դասընթացի առկայություն: Լրացական դասընթացները կրեդիտատար չեն:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ) <sup>8</sup>	Գիսամյակ	Գնահատման ձևը
18/M01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն	0	32/0/0	I	Ստուգարք
18/M01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն	0	32/0/0	II	Ստուգարք

#### Ընդհանուր դասընթացների կրթամաս

Ընդհանուր կրթամասի աշխատաձևվալը 3 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է 1 պարտադիր դասընթաց՝ «Մասնագիտության փիլիսոփայական հարցեր»; Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, *մասնագիտական պարտադիր կրթամասին* հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

<sup>8</sup> Այսուհետ՝ դ – դասախոսություն, գ – գործնական կամ սեմինար պարապմունք, լ – լաբորատոր աշխատանք



Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
16/M01	Մասնագիտության փիլիսոփայական հարցեր	3	32/0/0	I	Քննություն

### Մասնագիտական պարտադիր կրթամաս

Մասնագիտական պարտադիր կրթամասն ընդգրկում է 8-ից մինչև 16՝ երեքից հինգ կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ: Կրթամասի ընդհանուր աշխատաժամային ծրագրում սահմանված է 51 կրեդիտ: Մասնագիտորոշական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Մագիստրոսական ծրագիր՝

#### «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
05/M12	Ավտոմատացման և ֆորմալ լեզուների տեսություն	3	32/0/0	I	Քննություն
05/M13	Կոմբինատոր անալիզ	4	32/0/0	I	Քննություն
05/M14	Դիսկրետ օպտիմիզացիա	3	32/0/0	III	Քննություն
05/M15	Կողավորման տեսություն	4	32/0/0	III	Քննություն
05/M16	Օրթոգոնալ ձևափոխություններ և նրանց կիրառությունները	3	32/0/0	II	Քննություն
05/M17	Գրաֆների տեսության լրացուցիչ գլուխներ	3	32/0/0	I	Քննություն
05/M18	Հավանականության տեսության լրացուցիչ գլուխներ	4	32/0/0	I	Քննություն
05/M19	Ալգորիթմների տեսության լրացուցիչ գլուխներ	4	32/0/0	III	Քննություն
05/M20	Ինֆորմացիայի պաշտպանություն	3	32/0/0	III	Քննություն
05/M21	Ինֆորմացիայի տեսության լրացուցիչ հարցեր	3	32/0/0	II	Քննություն

05/M22	Կոմպյուտերային ցանցեր	3	32/0/0	II	Քննություն
05/M23	Ցանցային օպերացիոն համակարգեր /Unix-Linux/	4	32/0/0	I	Քննություն
05/M24	Թվային մեթոդների լրացուցիչ գլուխներ	3	32/0/0	II	Քննություն
05/M32	Իմացական ալգորիթմը և մոդելը մրցակցության հակադրության և երկխոսության խնդիրներում	4	32/0/0	III	Քննություն
05/M33	Ծածկագրաբանություն	3	32/0/0	II	Քննություն

### Կամրնտրական դասընթացներ

Կամրնտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաձևավալը ծրագրում սահմանափակված է 18 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջոցառումներ կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2-4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամրնտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաձևավալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամրնտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Մագիստրոսական ծրագիր՝  
**«Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա»**

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
05/M25	Ծրագրավորման լեզուներ	3	32/0/0	I	Քննություն
05/M26	Թվային տեխնոլոգիաների հիմունքներ	3	32/0/0	I	Քննություն
05/M27	Զուգահեռ հաշվարկներ	3	32/0/0	II	Քննություն
05/M28	Տեխնիկական հաշվարկների ժամանակակից տեխնոլոգիաներ	3	32/0/0	II	Քննություն
05/M30	Տվյալների բազաների մոդելներ	3	32/0/0	III	Քննություն
05/M35	Ամպային տեխնոլոգիաներ	3	32/0/0	III	Քննություն

**2.2. Հետազոտական կառուցամաս**

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա և մագիստրոսական թեզ:**

**Գիտական սեմինարը** ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ:

**Գիտահետազոտական աշխատանքի** բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն կազմակերպվում է ուսումնառության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կիսամյակներում՝ ընդհանուր 18 կրեդիտ աշխատածավալով:

**Գիտահետազոտական պրակտիկան** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատածավալ:

**Գիտամանկավարժական պրակտիկան** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատածավալ:

**Մագիստրոսական թեզի** կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատածավալ:

## Մաս II.

### ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

## 1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

*Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» մասնագիտության ամբիոնում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի նույնանուն մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է՝

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

## Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

16/M01. Մասնագիտության փիլիսոփայական հարցեր (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

### Նպատակը.

Դասընթացի նպատակն է փիլիսոփայությունը դարձնել մասնագիտական մտածողության մշակույթի անհրաժեշտ տարրերից մեկը: Այն կոչված է ընդլայնելու մագիստրանտների հոգևոր մտահորիզոնը, հաղթահարելու մասնագիտական սահմանափակության շրջանակները:

### Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը՝

1. **կժամտթանա** դասական և հետդասական փիլիսոփայական հայեցակարգերի հետ,

2. **ձեռք կբերի** մասնագիտական և փիլիսոփայական հիմնահարցերը քննադատաբար վերլուծելու և գնահատելու հմտություններ և ունակություններ,

3. **կժամտթանա** միջառարկայական հետազոտությունների մեթոդաբանական և աշխարհայացքային հիմքերի հետ:

### Բովանդակությունը

**Թեմա 1** Անտիկ փիլիսոփայության ընդհանուր ակնարկ: **Թեմա 2** Ֆրենսիս Բեկոնը որպես բրիտանական էմպիրիզմի հիմնադիր: **Թեմա 3** Բրիտանական էմպիրիզմի ակունքները, Ջ. Լոկ, Ջ. Բերկլի, Գ. Հյում: **Թեմա 4** Ռ. Դեկարտը որպես եվրոպական ռացիոնալիզմի հիմնադիր: **Թեմա 5** Ի. Կանտը որպես գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր: **Թեմա 6** Նեոկանտականություն: **Թեմա 7** Առաջին պոզիտիվիզմ (Կոնտ, Սպենսեր, Միլ): **Թեմա 8** Երկրորդ պոզիտիվիզմ (Մախ, Դյուգեմ, Պուանկարե), **Թեմա 9** Ամերիկյան պրագմատիզմ: **Թեմա 10** Գիտության փիլիսոփայությունը Լ. Վիտգենշտեյնի հայեցակարգի մեջ: **Թեմա 11** XX դ. տրամաբանական պոզիտիվիզմը: **Թեմա 12** Պոստպոզիտիվիզմ: **Թեմա 13** Տեսության մեթոդաբանական կարգավորիչները: **Թեմա 14** Հերմենևտիկական որպես մարդկային կեցության մասին փիլիսոփայական ուսմունք: **Թեմա 15** Էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը: **Թեմա 16** Լեզվի փիլիսոփայությունը: **Թեմա 17** Պատմության ժամանակակից փիլիսոփայությունը: **Թեմա 18** Գլոբալիզմի փիլիսոփայությունը:

### Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ քննությունից մեկը անց է կացվում մագիստրոսի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

### Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

# Լրացական դասընթացներ

## 18/M01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն-1-2) ( 0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք

### Նպատակը.

Ծրագրի նպատակն է ` ուսումնական գործունեության ընթացքում զարգացնել ուսանողների բանավոր և գրավոր խոսքը, կարողանալ անգլերեն լեզվով հասկանալ թեմատիկ տեքստեր, ընդլայնել մասնագիտական բառապաշարը: Ծրագրի նպատակն է նաև ուսանողներին զինել անգլերեն լեզվի բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող գիտելիքներով: Անգլերեն լեզվով խորացնել և ընդլայնել ուսանողների` ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտին վերաբերվող ընդհանուր տեսական և պրակտիկ գիտելիքները:

### Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին . մագիստրանտը`

1. **կիմանա** լսել և հասկանալ լսածի հիմնական միտքը և հատուկ ինֆորմացիան վերարտադրել և վերլուծել տվյալ թեմաները

2. **կհասկանա** մասնագիտական տերմինալոգիան, Գրավոր խոսքի շարադրման առանձնահատուկ կառույցները թեմատիկ մասնագիտական նոր բառապաշարը:

3. **կկարողանա** ընթերցել բնագրային տեքստը, անգլերեն լեզվով բացատրել մասնագիտական տերմինները, քննարկել թեման` օգտագործելով նոր թեմատիկ մասնագիտական բառապաշար

### Բովանդակությունը.

**Թեմա 1`** Working in the IT industry: **Թեմա 2`** Grammar: Present Simple, Present Continuous, stative verbs. **Թեմա 3`** Computer systems. **Թեմա 4`** Grammar: Past Simple, Past Continuous, used to. **Թեմա 5`** Websites. **Թեմա 6`** Countable and uncountable nouns & Articles: **Թեմա 7`** Database. **Թեմա 8`** Prepositions of time and place. **Թեմա 9`** E-commerce. **Թեմա 10`** Pronouns and possessive determiners. **Թեմա 11`** Network systems . **Թեմա 12`** Relative clauses, Vocabulary: People and daily life. **Թեմա 13`** IT support **Թեմա 14`** Future time (present continuous, will be going to, present simple). **Թեմա 15`** IT security and safety. **Թեմա 16`** *So* and *such, too* and *enough*. **Թեմա 17`** The Internet. **Թեմա 18`** Direct and indirect objects. **Թեմա 19`** The future of computers. No worms in these apples. **Թեմա 20`** Grammar: *-ing* and infinitive. **Թեմա 21`** Computer viruses. **Թեմա 22`** Comparatives and superlatives. **Թեմա 23`** Recent developments in IT. **Թեմա 24`** Modals and semi-modals. **Թեմա 25`** My resource map. **Թեմա 26`** Data processing. **Թեմա 27`** Adjectives and adverbs. **Թեմա 28`** Computing support. **Թեմա 29`** Conditionals. **Թեմա 30`** The ex-Hacker. **Թեմա 31`** Verbal complements. **Թեմա 32`** The future of IT.

### Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ստուգարքն անցկացվում է ստուգարքային թեստի դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:



## Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

### 05/M12. Ավտոմատացման և ֆորմալ լեզուների տեսություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

#### Նպատակը.

Ծրագրի նպատակն է ծանոթացնել ուսանողին <<Ավտոմատների և ֆորմալ լեզուների տեսություն>> առարկայի հիմնական հասկացություններին, մոդելներին ու սկզբունքներին, տալով անհրաժեշտ սկզբնական գիտելիքներ ավելի բարդ խնդիրների լուծման համար.

#### Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին . մագիստրանտը՝

1. **կիրառելի** թե ինչպես կարելի է տարբեր խնդիրներ մոդելավորել ավտոմատների տեսքով ու կատարել համապատասխան անալիզներ

2. **կհասկանա** առարկայի հիմնական տեսական արդյունքները, դրանց անալիտիկ հիմնավորումները և ապացույցները

3. **կկարողանա** կիրառել վերը նշված տեսական արդյունքները գործնական խնդիրների լուծման մեջ

#### Բովանդակությունը.

**Թեմա 1՝** Մայիլի թեորեմը վերջավոր ավտոմատներում ներկայացվող լեզուների մասին: **Թեմա 2՝** Ոչ դետերմինացված ավտոմատների դետերմինացումը: **Թեմա 3՝** Վերջավոր ավտոմատների անալիզի թեորեմը: **Թեմա 4՝** Ավտոմատների սինթեզի թեորեմը: **Թեմա 5՝** Ավտոմատների սինթեզի թեորեմը: **Թեմա 6՝** Ավտոմատների էկվիվալենտությունը և մինիմիզացիան: **Թեմա 7՝** Վերջավոր ավտոմատների այլ մոդելներ: **Թեմա 8՝** Կոնտեքստից անկախ լեզուներ: **Թեմա 9՝** Արտածման ծառեր: **Թեմա 10՝** Տեղադրում: **Թեմա 11՝** Պահունակային ավտոմատներ:

#### Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշներ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

#### Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

### 05/M13. Կոմբինատոր անալիզ (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

#### Նպատակը.

Ծրագրի նպատակն է՝ • հնարավորություն տալ ուսանողներին ծանոթանալ որոշակի պայմանների բավարարող կոմբինատոր համակցությունների (կոնֆիգուրացիաների) քանակների հաշվման ուղղակի և անուղղակի եղանակներին, զարգացնել կյանքի տարբեր իրավիճակներում հանդիպող կոմբինատոր բնույթի կիրառական զանազան խնդիրներ լուծելու

սովորողների կարողությունները: Չարգացնել ուսանողների ինքնուսուցման և ինքնադրսևորման կարողությունները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը՝

**1. կիմանա** բազմությունների տեսության և հանրահաշվի հիմնական հասկացությունները տեղափոխությունների, գուգորդությունների, կրկնություններով գուգորդությունների սահմանումները և դրանց քանակները հաշվելու բանաձևերը, Նյուտոնի երկանդամի ընդհանրացումները, սովորական և էքսպոնենցիալ ծնող ֆունկցիաների սահմանումներ

**2. կհասկանա** այսուհետ ինքնուրույն հասկանալ առարկային վերաբերող գիտական աշխատությունները, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնական և տեսական հետազոտություններում:

**3. կկարողանա** անդրադարձ առնչություններ լուծելու ունակությունների ծնող ֆունկցիաների օգնությամբ հաջորդականությունների, “հաշվման” եղանակների:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Բազմությունների տեսության տարրերը: **Թեմա 2՝** Հանրահաշվի հիմնական հասկացությունները: **Թեմա 3՝** Տարրական կոմբինատոր բանաձևեր: Նյուտոնի երկանդամը և նրա ընդհանրացումները: **Թեմա 4՝** Կցման և արտաքսման սկզբունքը: **Թեմա 5՝** Անդրադարձ առնչություններ: **Թեմա 6՝** Ծնող ֆունկցիաներ: **Թեմա 7՝** Բազմանդամային հաջորդականություններ: Հաջորդականությունների շրջման բանաձևեր:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**05/M14. Դիսկրետ օպտիմիզացիա (3 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ հնարավորություն տալ ուսանողներին ծանոթանալ դիսկրետ օպտիմիզացիայի խնդիրներին, նրանց լուծման ընդհանուր մեթոդներին, ինչպես նաև որոշ կոնկրետ օպտիմիզացիոն խնդիրների լուծման ժամանակակից լավագույն ալգորիթմներին, զարգացնել սովորողների կյանքի տարբեր իրավիճակներում հանդիպող կիրառական խնդիրներ լուծելու կարողությունները: Չարգացնել ուսանողների ինքնուսուցման և ինքնադրսևորման կարողությունները

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը՝

**1.կիմանա** դիսկրետ օպտիմիզացման խնդիրների ձևակերպումը, այդ խնդիրների առանձնահատկությունները և դրանց լուծման մեթոդների հիմնական դասերը, որոշ կոնկրետ դիսկրետ օպտիմիզացիոն խնդիրների լուծման հայտնի ալգորիթմները և այդ ալգորիթմների բարդությունը, դիսկրետ օպտիմիզացիոն

խնդիրների լուծման մոտավոր մեթոդները և էվրիստիկ ալգորիթմները, դիսկրետ իզոպերիմետրիկ խնդիրների ձևակերպումները:

**2. կհասկանա** շրջիկ գործակալի խնդիրը լուծել դինամիկ ծրագրավորման մեթոդով, գնահատել ձուլման և տեղավորման եղանակով տեսակավորման ալգորիթմի բարդությունը, կյանքի տարբեր բնագավառներում հանդիպող կիրառական խնդիրներ լուծելու և գործնական աշխատանքներ կատարելու համար օգտագործել դիսկրետ օպտիմիզացման խնդիրների լուծման կոմբինատոր մեթոդները:

**3. կկարողանա** տիրապետել դիսկրետ օպտիմիզացման խնդիրների լուծման կոմբինատոր մեթոդներին (ճյուղավորման և սահմանափակումների մեթոդ, դինամիկ ծրագրավորման մեթոդ) ալգորիթմների բարդությունը գնահատելու ունակությունների կիրառական խնդիրները մոդելավորելու հմտություններին:

#### **Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Դիսկրետ օպտիմիզացման խնդրի դրվածքը և նրա առանձնահատկությունները: **Թեմա 2**՝ Դիսկրետ օպտիմիզացման խնդիրների լուծման ճյուղավորման և սահմանափակումների մեթոդը: **Թեմա 3**՝ Դիսկրետ օպտիմիզացման խնդիրների լուծման դինամիկ ծրագրավորման մեթոդ: **Թեմա 4**՝ Դիսկրետ օպտիմիզացման խնդիրների լուծման մոտավոր մեթոդները և ալգորիթմները: **Թեմա 5**՝ Դիսկրետ իզոպերիմետրիկ խնդիրներ: **Թեմա 6**՝ Տեսակավորման խնդիրներ և ալգորիթմներ: **Թեմա 7**՝ Օպտիմիզացման խնդիրներ գրաֆների համար:

#### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

#### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

#### **05/M15. Կողավորման տեսություն ( 4 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

#### **Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ է ուսանողներին ծանոթացնել կողավորման հանրահաշվական տեսության և ծածկագրության խնդիրների լուծման կարևորագույն թվային մեթոդներին և զարգացնել սովորողների կյանքի տարբեր իրավիճակներում հանդիպող կիրառական խնդիրներ լուծելու կարողությունները:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը՝

**1. կիմանա** կողավորման հանրահաշվական տեսության և ծածկագրության խնդիրների լուծման կարևորագույն թվային մեթոդներինը և դրանք կօգտագործի տարբեր իրավիճակներում հանդիպող կիրառական խնդիրներ լուծելու ժամանակ:

**2. կհասկանա** ինչպես ստեղծել ինտերֆեյս MatLab միջավայրում

**3. կկարողանա** ուսումնասիրել վեկտորային տարածությունները և գծային հանրահաշիվ, մատրիցներ, ուսումնասիրել բազմանդամների մնացքների դասերի հանրահաշիվը, Գալուայի դաշտը և նրա մուլտիպլիկատիվ խումբը:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Գծային հանրահաշվի հիմնական հասկացությունները: Վեկտորական տարածություններ և մատրիցներ: **Թեմա 2**՝ Հանրահաշվական հիմնադրույթները: Խմբեր, օղակներ, ենթախմբեր և ֆակտորիսմբեր: **Թեմա 3**՝ Գծային կող, սահմանումը, նկարագրությունը մատրիցների օգնությամբ: **Թեմա 4**՝ Կողի կանոնական դասավորությունը: Ապակոդավորում էտապներով **Թեմա 5**՝ Մխալների ուղղման հնարավորությունները գծային կողերի միջոցով: **Թեմա 6**՝ Կարևորագույն գծային կողերը: Հեմինգի կողը: Օպտիմալ կողեր երկուական սիմետրիկ կապուղու համար: **Թեմա 7**՝ Վերջավոր դաշտեր, սահմանումներ: Վերջավոր դաշտերի հանրահաշվական ստրուկտուրան, օրինակներ: **Թեմա 8**՝ Ամբողջ թվերի իդեալներ և դասեր: Բազմանդամների իդեալներ և մնացքների դասեր: **Թեմա 9**՝ Ցիկլիկ կողեր և իդեալներ: Ցիկլիկ կողերի մատրիցային նկարագրությունը: **Թեմա 10**՝ Հեմինգի երկուական կողերը: Կարճեցված ցիկլիկ կողեր: **Թեմա 11**՝ Թվային էլեկտրոնային ստորագրություն: RSA ծածկագրման համակարգը: **Թեմա 12**՝ Էլ-Գամալի թվային ստորագրությունը (կամ DSA-ը): **Թեմա 13** Բոուզի- Չոուդի-Խուրի-ի կողերը, սահմանումներ: Երկուական կողեր:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**05/M16. Օրթոգոնալ ձևափոխություններ և նրանց կիրառությունները ( 3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել թվային պատկերների և ազդանշանների մշակման տեսական և կիրառական մեթոդների մասին: Ուսումնառության ընթացքում ուսանողը ձեռք կբերի արագ ձևափոխությունների մշակման տեսական գիտելիքներ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը՝

**1.կիմանա** թվային պատկերների մշակման հիմնական մեթոդներն ու ընթացակարգերը

**2. կհասկանա** հայտնի դասական օրթոգոնալ մատրիցները նույն մատրիցների արտադրյալի տեսքով ներկայացնել, այնուհետև այն կիրառել թվային պատկերների մշակման խնդիրներում (սեղմում, ֆիլտրում, չափերի փոփոխում և այլն):

**3. կկարողանա** իրականացնել թվային պատկերների սեղման, աղմուկների հեռացման, պատկերների չափերի փոքրացման և մեծացման և այլ ընթացակարգեր;

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Որոշ անհրաժեշտ սահմանումներ և գործողություններ: **Թեմա 2**՝ Հաղամարի մատրիցներ և Հաղամարի արագ ձևափոխություններ: **Թեմա 3**՝ Վիլիամսոնի մատրիցների կառուցման հիմնական թեորեմները: **Թեմա 4**՝ Հաղամարի արագ ձևափոխության ալգորիթմները: **Թեմա 5**՝ Հաղամարի մատրիցների կառուցման ալգորիթմներ: **Թեմա 6**՝  $n \equiv 0 \pmod{4}$  կարգի Հաղամարի արագ ձևափոխություն ալգորիթմը: **Թեմա 7**՝ Ֆուրյեի դիսկրետ ձևափոխությունը և նրա հատկությունները: **Թեմա 8**՝ Ֆուրյեի դիսկրետ արագ ձևափոխության ալգորիթմը: **Թեմա 9**՝  $3^{-}$ ,  $5^{-}$ ,  $3^{n-}$ ,  $3 \cdot 2^{n-}$ ,  $5 \cdot 2^{n-}$  կատանոց Ֆուրյեի արագ ալգորիթմները: **Թեմա 10**՝ Սինուսոիդային արագ ձևափոխություններ: **Թեմա 11**՝ DCT4 մատրիցի ներկայացումը նոսր մատրիցների արտադրյալի տեսքով: **Թեմա 12**՝ PEG համակարգի նկարագրությունը: **Թեմա 13**՝ Թվային պատկերների ներկայացման ֆորմատները:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**05/M17. Գրաֆների տեսության լրացուցիչ զլուխներ ( 3 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել գրաֆների տեսության մի քանի կարևոր բաժիններին՝ էքստրեմալ գրաֆներին, գրաֆների շրջանցումներին, գրաֆի զագաթային և կողային կապակցվածությանը, օպտիմալ ծառերի կառուցմանը, հարթ գրաֆներին և գրաֆների ներկման թվերի ստորին և վերին գնահատականներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը՝

**1. կիմանա** դասավանդվող նյութի հիմնական գաղափարներն ու սկզբունքները, էքստրեմալ գրաֆների բաժնի հիմնական արդյունքները՝ Ռամսեյի և Տուրանի թեորեմները, գրաֆների շրջանցումներ, Մենգերի թեորեմի զանազան տարբերակներ և դրանց կիրառություններ, հարթ գրաֆների ներկման վերաբերյալ 5-գույների թեորեմը և տեսական այլ կարևոր արդյունքները:

**2. կհասկանա** Առարկայի դրույթները, ապացույցների տեխնիկան և մեթոդները: Ձեռք կբերի սեմինարներին ելույթ ունենալու և խնդիրներ լուծելու կարողություններ և հմտություններ:

**3. կկարողանա** այսուհետ ինքնուրույն հասկանալ առարկային վերաբերող գիտական նոր արդյունքներ, գործնական խնդիրների լուծման համար կկարողանա

կառուցել գրաֆային համապատասխան մոդելներ և ձեռք բերած գիտելիքները կկիրառի գործնական և տեսական հետազոտություններում:

**Բովանդակությունը.**

*Թեմա 1*՝ Ռամսեյի թեորեմ: *Թեմա 2*՝ Էքստրեմալ գրաֆներ: *Թեմա 3*՝ Երկմասնյա գրաֆներ և Ծառեր: *Թեմա 4*՝ Օպտիմալ ծառեր: *Թեմա 5*՝ Էյլերյան գրաֆներ: *Թեմա 6*՝ Համիլտոնյան գրաֆներ: *Թեմա 7*՝ Գրաֆների կապակցվածություն: *Թեմա 8*՝ Մենգերի թեորեմ: *Թեմա 9*՝ Գրաֆների ներկումներ: *Թեմա 10*՝ Հարթ գրաֆներ:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**05/M18. Հավանականության տեսության լրացուցիչ գլուխներ (4 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ դասընթացի ընթացքում ուսանողներին ներկայացնել դասավանդվող առարկայի նպատակը, խնդիրները: Ուսուցանել և զարգացնել տեսական և գործնական գիտելիքներ Հավանականության տեսության և մաթեմատիկական վիճակագրության գաղափարների, սկզբունքների և մեթոդների վերաբերյալ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը՝

**1. կիմանա** առարկայի հիմնախնդիրները, հիմնական գաղափարներն ու սկզբունքները, տեսական կարևոր արդյունքները:

**2. կհասկանա** կարողանա այսուհետ ինքնուրույն հասկանալ առարկային վերաբերող գիտական աշխատությունները, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնական և տեսական հետազոտություններում:

**3. կկարողանա** տիրապետել առարկայի դրույթներին, ապացուցումների մեթոդներին:

**Բովանդակությունը.**

*Թեմա 1*՝ Պատահույթներ: Հավանականային տարածություն: *Թեմա 2*՝ Պատահական մեծություն, բաշխման ֆունկցիա: *Թեմա 3*՝ Պատահական մեծության թվային բնութագրիչներ: *Թեմա 4*՝ Մեծ թվերի օրենք: Կենտրոնական սահմանային թեորեմներ: *Թեմա 5*՝ Նկարագրական վիճակագրություն, նմուշահանում: *Թեմա 6*՝ Պարամետրերի գնահատման եղանակներ: *Թեմա 7*՝ Վիճակագրական վարկածների ստուգում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:  
Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար  
4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**05/M19. Ալգորիթմների տեսության լրացուցիչ գլուխներ ( 4 կրեդիտ)**  
*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ծանոթացնել ալգորիթմների տեսությունում  
հետազոտվող որոշ կարևոր գիտական ուղղությունների հիմնական  
սկզբնաղբյուրներին:

**Կրթական արդյունքները..**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը՝

**1. կիմանա** կրեատիվ և պարզ բազմությունների ուսումնասիրությունը, *m*-  
հանգեցման, աղյուսակային և թյուրինգյան հանգեցումների և համապատասխան  
անլուծելիության աստիճանների կառուցվածքի հետազոտումը:

**2. կհասկանա** վերոնշյալ հասկացությունների ուսումնասիրության և  
հետազոտության համար անհրաժեշտ ապարատի որոշ կարևոր  
բաղադրատարրեր:

**3. կկարողանա** ինքնուրույն ընթերցել և ընկալել վերոնշյալ  
հասկացություններին վերաբերող գրականությունը (մասնավորապես  
ուսումնական ձեռնարկները):

**Բովանդակությունը.**

*Թեմա 1՝* Թյուրինգի ֆորմալիզացիա: *Թեմա 2՝* Պարզագույն ռեկուրսիվ  
ֆունկցիաներ: *Թեմա 3՝* Կլինիի ֆորմալիզացիա: *Թեմա 4՝* Գյոդելյան համարներ,  
s-m-n թեորեմ, ունիվերսալ ֆունկցիաներ: *Թեմա 5՝* Ռեկուրսիվ և ռեկուրսիվորեն  
թվարկելի բազմություններ: *Թեմա 6՝* 1-հանգեցում, m-հանգեցում: *Թեմա 7՝*  
Կրեատիվ բազմություններ և պարզ բազմություններ: *Թեմա 8՝* Աղյուսակային  
հանգեցում: *Թեմա 9՝* Ռեկուրսիայի մասին թեորեմ: *Թեմա 10՝* Հարաբերական  
ռեկուրսիվություն: *Թեմա 11՝* Թյուրինգի աստիճանների կառուցվածքը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի  
գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման  
վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:  
Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար  
5 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**05/M20. Ինֆորմացիայի պաշտպանություն - (3 կրեդիտ)**  
